ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2025 թվականի N 386

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ ԹԱՂ.) 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԵՄԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռեմիկ Սամվելի Այվազյանի (ծնված՝ 29.01.1992թ.), 18.01.2024թ. թիվ 02/1191 դիմումը, 01.03.1989 թվականին տրված տեխնիկական անձնագիրը, 12.12.2023 թվականին տրված թիվ 7063 (նոտարական ակտի կոդ: 741-20231211-84-7542174) և թիվ 7064 (նոտարական ակտի կոդ: 741-20231211-84-7542481) ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 18.11.2024թ. տրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի մասին թիվ ՎՆ1-354/24 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023RKW5DL), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը: Հաշվի առնելով այն, որ Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 1-ին փողոց թիվ 24 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 405քմ և կից 300քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1965-1994թթ, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 705քմ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Ռեմիկ Սամվելի Այվազյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Վանաձոր քաղաքի, Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 1-ին փողոց թիվ 24 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 405քմ մակերեսով հողամասին կից կից 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Ռեմիկ Սամվելի Այվազյանի սեփականության իրավունքը՝ մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի, Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 1-ին փողոց թիվ 24 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.0705հա մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ") 1-ին փողոց թիվ 24 հասցեում գտնվող, Ռեմիկ Սամվելի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած 0.0705 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի,հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 1-ին փողոց, 24/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. փետրվարի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2025 թվականի N 387

ԱՐԵՆ ԱՐԱՅԻ ԱՆԱՆՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 03.02.2025թ. թիվ ԼԴ/0316/01/23 գործով կայացված դատավճիռը, ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածով, աշխատանքային օրենսգրքի 108.1 հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Կասեցնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արեն Արայի Անանյանի պաշտոնավարումը՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ վճարել ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 06.02.2025 թվականից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. փետրվարի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 388

«ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կողմից կազմակերպված ՀՀ ԼՄՎՀ ԳՀԾՁԲ-25/13 ծածկագրով **Վանաձոր համայնքի 2-րդ և 3-րդ գոտիների փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների ձեռքբերման** գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն՝ 1-ին, 2-րդ չափաբաժինների համար:Գնահատող հանձնաժողովը ,30.12.2024թ կայացած նիստում, արձանագրել է, որ «ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԼՄՎՀ ԳՀԾՁԲ-25/13 ծածկագրով ընթացակարգին ներկայացված փաստաթղթերը վավերացնելու համար լիազորագիրը առկա չէ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցել է «ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սակայն «ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի կատարել շտկումը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում:

Այսպիսով՝ «ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ–ն՝ չի կատարել համապատասխան շտկումը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին «ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով, ***որոշում եմ***.

1.«ՄՎ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 389

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՄԵԼԻՆԵ ՌՈՒԴԻԿԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդուարդ Ռուդիկի Անդրեասյանի դիմումն իր անգործունակ քրոջ՝ Մելինե Ռուդիկի Անդրեասյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 31-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 3, կետ 3), նաև հիմք ընդունելով Մելինե Ռուդիկի Անդրասյանին անգործունակ ճանաչելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ ԼԴ/5469/02/23 վճիռը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4, Բել. թիվ 24 շենքի, թիվ 5 բնակարանի բնակիչ՝ Էդուարդ Ռուդիկի Անդրեասյանին (ծնված՝ 15.07.1975թ., անձնագիր՝ AL 0563212, տրված՝ 28.12.2023թ., 001-ի կողմից) նշանակել իր անգործունակ քրոջ՝ Մելինե Ռուդիկի Անդրեասյանի (ծնված՝ 06.09.1984թ., անձնագիր՝ AP 0646637, տրված՝ 08.12.2016թ., 018-ի կողմից) նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք.Վանաձոր